

ՄՈՍԿՎԱՅԻ ՌՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Posted on March 28, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Վլադիմիր Պետրոսյան, Երևան, 2021

Նկատի ունենալով ՀՀ-ՌԴ եւ ՌԴ-Թուրքիա յարաբերութիւններու նոր փուլ մտնելը, ուր յստակօրէն կ'երեւին նոր մերձեցումներ, որոնք ցոյց կու տան թէ յառաջիկայ տարիներուն կը սպասուին տարածաշրջանային նոր զարգացումներ, խմբագրութիւնս նպատակայարմար գտաւ իր ընթերցողներուն ծանօթացնել պատմաբան Վլադիմիր Պետրոսեանի մէկնաբանութիւնները հարիւր տարի առաջ կնքուած այն դաշնագիրներուն մասին, ուր արժարժուած են հողային եւ սահմանային խնդիրներ, որոնք ի վերջոյ յանգած են Խորհրդային Հայաստանի, Խ. Ապրպեյճանի, Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի մեզի յայտնի քարտէզին: Նշենք որ ստորեւ բերուած գրութիւնը հեղինակին ներածական խօսքն է իր նոր հրատարակած «ՄՈՍԿՎԱՅԻ 1921 Թ. ՄԱՐՏԻ 16-Ի ՌՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ» աշխատութեան:

Վերջին 44 օրեայ պատերազմին պատճառով ՀՀ-ի մէջ ստեղծուած բարոյա-հոգեբանական տրամադրութիւնները պատճառ հանդիսացած են նաեւ հակա-ռուս տրամադրութիւններու զգալի մագլցումի: Հետեւաբար, նկատի առնելով նաեւ ստեղծուած ջղագրգիռ կացութիւնը, խմբագրութիւնս իր ընթերցողներուն ուշադրութեան կը յանձնէ պատմաբանին ներածական նշումները:

Գրութեան երկարութիւնը նկատի ունենալով որոշեցինք հրատարակել երկու մասով: Միաժամանակ կը կցենք նաեւ պատմաբան եւ դիւանագետ [Դոկտ. Արա Պապեանի դիտարկումները**](#) այս խնդրին շուրջ: Խմբ.**



Վլադիմիր

Պետրոսյան, Երեւան, 2021

1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի կնքումից անցել է 100 տարի: Այդ պայմանագիրը մինչև օրս էլ գտնվում է հանրության ուշադրության կենտրոնում: Հայտնվել են իրարամերժ տեսակետներ: Հեղինակների մի մասը, հատկապես Դաշնակցության գաղափարախոսները և նրանց հետևորդները, այդ պայմանագիրը համարում են հայ ժողովրդի դեմ ռուս-թուրքական դավադրություն, Հայաստանի հաշվին իրենց խնդիրները լուծելու միջոց: Անհրաժեշտ չեմ համարում նրանց արտահայտած գնահատականին հանգամանորեն անդրադառնալ: Միայն կամենում եմ շատ համառոտ նշել հետևյալը:

1. Վերոհիշյալ ուսումնասիրողներն ու հեղինակները նշում են, թե այդ պայմանագիրը «կնքել են Սովետական Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, որոնք միջազգային իրավունքի սուբյեկտ չեն հանդիսացել, և այդ իմաստով այն ամբողջապես անօրինական պայմանագիր է»: Այսպիսի պնդումը ժամանակավրեպ է, քանի որ երկու պետությունների միջև կնքված պայմանագրով հաստատված սահմանը, ի վերջո, ճանաչվել է Լոզանի կոնֆերանսում: Որքան էլ նրանք կրկենեն, թե կնքված պայմանագիրն անօրինական է, որևէ արժեք չի ներկայացնում և միայն սուբյեկտիվ զգացումի արդյունք է:
2. Վերոհիշյալ գաղափարախոսները մարտի 16-ին կնքված պայմանագիրը գնահատում

են որպես «չարաբաստիկ պայմանագիր» և պնդում են, թե «այդ պայմանագրով Թուրքիային է հանձնվել ոչ միայն Կարսի մարզը, այլև Սուլումալուի գավառը, իսկ Նախիջևանը զիջվել է Սովետական Ադրբեջանին»: Վերոհիշյալ հեղինակները «մոռանում են», որ Կարսի մարզն ու Սուլումալուն թուրքական զորքերը զավթել էին 1920 թվականի նոյեմբերի սկզբին: Նրանք նաև «մոռանում են», որ 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում քեմալական Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված պայմանագրով Հայաստանի սահմաններից Թուրքիայի պնդմամբ դուրս են թողել Կարսը, Սուլումալուն, Արմավիրի և Թալինի շրջանների տարածքները, Շիրակի դաշտավայրը Ալեքսանդրապոլ քաղաքով, Արթիկի, Սպիտակի, Վանաձորի շրջանները, ինչպես նաև Արարատի շրջանի մի մասը, Շարուր-Դարալագյազը, Ղարաբաղը, Չանգեզուրը և Նախիջևանը: Այդ հեղինակներին հարկ եմ համարում հիշեցնել, որ 1920 թ. նոյեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Վրաստանի հետ կնքված պայմանագրով նրան է հանձնել Լոռու տարածքը:

Այսպիսով, դեկտեմբերի 2-ին կնքված պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքը կազմել է 9.000 քառ. կմ: Անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ տարածքները, բացի Ղարաբաղից ու Նախիջևանից, մարտի 16-ին ստորագրված պայմանագրով վերադարձվել են Հայաստանին: Հայաստանին վերադարձված տարածքների փոխարեն Թուրքիային են հանձնվել Կարսը և Սուլումալուն: Ինչ վերաբերում է Նախիջևանին, ապա այնտեղ հաստատվել էր սովետական իշխանություն, և, որպեսզի կանխվեր Թուրքիայի մտադրությունը, Սովետական Ռուսաստանի պնդմամբ Նախիջևանը հանձնվել է Սովետական Ադրբեջանին: Այսպիսով, ռուս-թուրքական պայմանագրով Հայաստանի տարածքը 9000 քառ. կմ-ից հասցվել է մոտ 30000 քառ. կմ-ի:

Իսկ Ղարաբաղի հարցի կապակցությամբ անհրաժեշտ է նշել հետևյալը: Սովետական Ռուսաստանի պահանջով Թուրքիայի հետ վարվող բանակցություններին հրավիրվել էին մասնակցելու Սովետական Հայաստանի և Սովետական Ադրբեջանի պատվիրակությունները: Քառակողմ բանակցությունների ընթացքում քննարկվելու և որոշվելու էր Սովետական Հայաստանի ու Թուրքիայի, ինչպես նաև Սովետական Հայաստանի և Սովետական Ադրբեջանի սահմանների հարցը: Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը Լենինին ուղարկած նամակում Ղարաբաղը համարում էր վաղնջական հայկական տարածք: Նկատի ունենալով Չիչերինի այս տեսակետը՝ անհրաժեշտ է նշել, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը, ամենայն հավանականությամբ, կնքվող պայմանագրով, հիմք ընդունելով, Ղարաբաղը, Չանգեզուրը և Նախիջևանը Սովետական Հայաստանին զիջելու մասին Սովետական Ադրբեջանի պաշտոնական հռչակագիրը, մտադրություն ուներ դրան իրավական ձևակերպում տալ:

3. 1921 թվականի մարտի 16-ին կնքված պայմանագիրը որոշ հեղինակներ գնահատում

են որպես «հակահայկական բնույթ ունեցող»: Նրանք այդ տեսակետը հիմնավորելու համար ընդգծում են, որ Մոսկվայում սկսված ռուս-թուրքական բանակցություններին» հայկական պատվիրակությանը թույլ չի տրվել մասնակցել, և գրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից»: Մեղմ ասած, Դաշնակցության գաղափարախոսները և նրանց հետևորդները մեղանշում են ճշմարտության առջև: Միաժամանակ վերոհիշյալի կապակցությամբ ուզում են հիշեցնել հետևյալը:

1921 թ. փետրվարի 24-ին Երևանում գտնվող թուրքական հրամանատարության ներկայացուցիչ Բեհաեդդին բեյը, որը նաև Հայաստանում ներկայացնում էր թուրքական կառավարությանը, այցելել է Ս. Վրացյանին և հայտարարել. «Մեր կառավարությունը ճանաչում է Հայաստանի փրկության կոմիտեն որպես միակ ազգային իշխանություն Հայաստանում: Եվ այն չափով, որ չափով Հայաստանի և Տաճկաստանի սահմանների հարակից խնդիրներն ստացել են իրենց իրավական լուծումը Ալեքսանդրապոլի դաշնագրով, պարզ է, որ հայկական կառավարությունը ևս չի հանդուրժի, որպեսզի Մոսկվայի խորհրդաժողովում այդ հարցերը քննության առնվեն»: Բեհաեդդին Շաքիրը նաև խնդիր է դրել. «Համաձայնութեան պետութիւնների և Տաճկաստանի փոխարաբերութիւններն արդէն նոր ընթացք են ստանում, որի լաւագոյն ապացույցն է հանդիսանում մօտ օրերս կայանալիք Լոնտոնի խորհրդաժողովը: Հայ ազգային կառավարութիւնը, անկասկած, հարկ եղած միջոցները կը ձեռնարկէ Ալեքսանդրապոլի եղբայրական դաշնագրի հիմունքներով, հենց որպէսզի երրորդ օտար ուժեր հայկական խնդիրն առիթ չծառայեցնեն, պատգամավորութեան (նկատի ունի թուրքական պատվիրակությունը - Վ.Պ.) հնարաւորութիւնները սահմանափակելու»: Եվ Թուրքիայի թելադրանքով Ս. Վրացյանը հեռագրեր էուղարկել Մոսկվա ու Լոնդոն:

Ստորև ներկայացնում են «Ազատ Հայաստան» թերթի հաղորդումը և Ս. Վրացյանի՝ Մոսկվա ուղարկած վերջին հեռագիրը.

ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐՅԱՅՏԱԳԻՐԸ ՉԻՉԵՐԻՆԻՆ

Մեր թերթի մէջ մենք արդէն հաղորդել ենք, որ Մօսկւայում բացւել է արևելքի խնդիրներին նւիրւած մի ժողով, որին մասնակցում են, նաև, Տաճկաստանի ներկայացուցիչները: Այդ ժողովում, ինչպէս կյիշէ ընթերցողը, իբրև Հայաստանի պաշտօնական ներկայացուցիչ դուրս է եկել նախկին արտ. գործ. ժող. կօմ. Բեկզադեանը այն ժամանակ, երբ բօլշևիկեան իշխանութիւնը Հայաստանում տապալւած է, նկատի ունենալով, որ նախկին բօլշևիկեան իշխանութեան ներկայացուցիչները անամօթաբար շարունակում են խօսել ու գործել իբրև Հայաստանի ներկայացուցիչներ, Հայաստանի արտաքին գործերի նախարարութեան վարիչ Ս. Վրացեանը ուղղել է Մօսկւա, Չիչերինին հետևեալ հեռագիրը, միանգամ ընդմիշտ վերջ դնելու համար հայ բօլշևիկների ոտնձգութիւններին ընդդէմ ազատագրւած Հայաստանի:

ՄՈՍԿՎԱ, ԱՐՏ. ԳՈՐԾ. ԺՈՂ.ԿՕՍԻՍԱՐ ԶԻՉԵՐԻՆԻՆ ԲՈՒՐՈՒՆ, ԲՈՒՐՈՒՆ, ԲՈՒՐՈՒՆ

Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն իր ժամանակին հաղորդեց ձեզ, որ աշխատաւոր զանգւածները տարերային բնոյթ կրող ապստամբութեամբ տապալեցին Հայաստ. խորհրդային կարգերը, և որ փետրւարի 18-ից ամբողջ իշխանութիւնն անցաւ հայ դեմոկրատիայի իսկական ներկայացուցիչների ձեռքը: Այնինչ, Նախկին խորհրդային Հայաստանի արտ. գործ.ժող կոմիսար Բէկզադեանը շարունակում է Մօսկւայում հանդէս գալ, խօսել Հայաստանի Հանրապետութեան անունից: Հարկ ենք համարում կրկին անգամ ձեր ուշադրութիւնը հրաւիրելու և այն հանգամանքի վրա, որ փետրւարի 18-ի ակտով ոչնչացւած են Նախկին խորհրդային Հայաստանի կառավարութեան կողմից հաստատուած ներկայացուցչութիւնները, Նաև այս կամ այն անձին արւած լիազօրութիւնները, հետևաբար, Բէկզադեանի հանդէս գալը իբրև Հայաստանի ներկայացուցչի, իրեն չպատկանող իրաւունքների մի կոպիտ շահագործութիւն է: Հայաստանի կառավարութիւնը սրանով յայտարարում է, որ իր համար պարտադիր չեն Հայաստանի Հանրապետութեան անունից Բէկզադեանի ձեռքով կնքւած բոլոր պայմանագրերը, Նաև Նրա կողմից յանձն առնւած բոլոր պարտականութիւնները, ինչ իմաստով և ինչ չափով էլ որ լինին Նրանք No 75, 12 մարտի: Արտաքին գործերի Նախարարութեան վարիչ՝ Ս. Վրացեան» («Ազատ Հայաստան», 1921թ. 15 մարտի):

(Շարունակելի)

Աղբիւր՝ [Նոր Խօսք](#)

Comments



Armenag Baghdoyan – 2021-04-06 13:54:32

Պատմաբանի առարկայական պարզաբանում՝ հայոց նորագոյն պատմութեան բեկումնային մէկ դրուագին: Քաղաքականօրէն դեռևս տհաս մեր ժողովուրդին համար օդի չափ կարևոր է իմանալ պատմական ճշմարտութիւնները: Դժբախտաբար վերջին դարու մեր պատմագիրներուն պակասած են անաչառութիւնն ու հայ ժողովուրդի պատմութիւնը միջազգային իրադարձութիւններու համատեքստին մէջ տեղաւորելու անհրաժեշտ ընկալումը: Խիստ դաստիարակիչ պիտի ըլլայ նաև մեծ տերութիւններու շահերուն հետ Հայաստանի ճակատագրի յարակցութեան իմացումը: Վլատիմիր Պետրոսեանի աշխատասիրութիւնը՝ ըստ երևոյթին՝ արդար յոյս կը ներշնչէ այս ուղղութեամբ: Անհամբեր կը սպասեմ երկրորդ հատուածին: